Բացատրագիր

Տվյալ նախագծի աշխատանքային փաստաթղթերի մշակման համար հիմք է հանդիսացել որպես պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված N ԵՔ-ԲԼԱՇՁԲ-16/129 պայմանագիրը, համաձայն Երևան քաղաքի բակային տարածքներում Մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման տեխնիկական բնութագրի:

1. Ընդհանուր մաս

Նախագծի առարկան է՝ ԳՅՈՒԼԻՔԵԽՎՅԱՆ 26 ՀԱՍՑԵՈՒՄ «ՏՈՐՔ ԱՆԳԵՂ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ:

2. Նախագծային մաս

Մինի ֆուտբոլի դաշտի շահագործումն ապահովելու համար, նախագծով նախատեսված և մշակված է (25.85 x14.05) մետր չափերով մարզահրապարակ, որը պարփակված է 2,07 մ քայլով 96 սմ բարձրությամբ մետաղական կանգնակներով, որոնց միջտարածքային հատվածը լրացված է փայտե տախտակներից կազմված արգելապատնեշով:

Խաղահրապարակը կազմված է 10 սմ խիճ և 4 սմ ասֆալտբետոնե նախապատրաստական շերտերից:

Ասֆալտբետոնե մակերեսը փռված է 0,01% թեքությամբ արհեստական խոտածածկույթից:

Մինի ֆուտբոլի դաշտը նախատեսված է նաև բասկետբոլի և վոլեյբոլի խաղեր անցկացնելու անհրաժեշտ պայմաններ:

3. Լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները

Կապալառու պետք է ունենա շինարարության իրականացման համար քաղաքաշինության ոլորտում բնակելի, հասարակական և արտադրական աշխատանքների , ինչպես նաև էներգետիկ աշխատանքների լիցենզիաներ :

- Տեխ. միջոցներից համապատասխան գործիքներ, սարքեր և սարքավորումներ, նախագծով նախատեսված համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար:
- Աշխատանքային ռեսուրսներ և մասնագիտական հատկանիշներ:

Տվյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ են փորձառու մասնագիտական բրիգադներ, համապատասխան մասնագիտական որակավորումներով, 3 տարուց ոչ պակաս աշխատանքային փորձով:

Բոլոր տիպի աշխատանքները պետք է կատարվեն պահպանելով շին. Նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխ. պայմանները:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ, շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ:

Շին. տեղամասի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Շինարարական բոլոր տիպի աշխատանքների երաշխիքային ժամկետը, նորմալ շահագործման պայմաններում, սահմանվում է 10 տարուց ոչ պակաս:

| N/N | | Անվանումը |
|---|---|---|
| 1 | ՃՇ-1 | Ընդհանուր տվյալներ |
| 2 | ՃՇ-2 | Գլխավոր հատակագիծ Մ 1:500 |
| 3 | ՃՇ-3 | Տեղանքի հատակագիծ (չափագրություն) Մ 1:100 |
| 4 | ՃՇ-4 | Տեղանքի հատակագիծ (նախատեսվող) Մ 1:100 |
| 5 | ՃՇ-5 | Մարզադաշտի մետաղական կարկասի տեղաբաշխում Մ 1:100 |
| 6 | ՃՇ-6 | Մարզադաշտի ջրահեռացման հատակագիծ Մ 1:100 |
| 7 | ՃՇ-7 | Մարզադաշտի հատակագիծ Մ 1:100 |
| 8 | ՃՇ-8 | Տիպային հանգույցներ |
| 9 | ՃՇ-9 | Տիպային հանգույցներ |
| 10 | ՃՇ-10 | Տիպային հանգույցներ |
| 11 | ՃՇ-11 | Տիպային հանգույցներ |
| 12 | ՃՇ-12 | Աղբաման |
| 13 | ՃՇ-13 | Նստարան |

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 25 օր | 25 օր | 25 օր | 25 օր |
| 1 | ՏԱՐԱԾԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ | | | | |
| 2 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | |
| 3 | ԱՐԳԵԼԱՊԱՏՆԵՇԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ | | | | |
| 4 | ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ | | | | |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | | | | |
| 6 | ՕԲՅԵԿՏԻ ՀԱՆՁՆՈՒՄ | | | | |

| ՊԱՇՏՈՆ | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ՍՏՈՐԱԳՐ. | ԱՄԻՍ |
|---|---|---|---|
| ՆԳՃ | Հ. Մեսրոպյան | | |
| Նախագծեց | Հ. Մեսրոպյան | | |

ԳՅՈՒԼԻՔԵԽՎՅԱՆ 26 ՀԱՍՑԵՈՒՄ «ՏՈՐՔ ԱՆԳԵՂ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

| ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
|---|---|---|---|
| | ԱՆ | ՃՇ-1 | 13 |

Ընդհանուր տվյալներ

«ՀԱՄԱՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ